

ՉՈՒՌՆԱՆ ՀԱՅՈՑ ԿԵՆՑԱՂՈՒՄ

2. Վ. ՊԻԿԻՉՑԱՆ

Հայոց ավանդական նվագարանների համակարգում իր ֆունկցիոնալ նշանակությամբ և ձայնային առանձնահատկություններով յուրօրինակ տեղ է գրավում փողային-լեզվակային խմբին պատկանող գուռնան, որի կառուցվածքի, կատարման եղանակների ու ոլորտների մասին բազմաթիվ տեղեկություններ ու հետաքրքիր նյութեր կան ժողովրդական բանահյուսության մեջ, սլաոմիչների ու մատենագիրների երկերում, միջնադարյան մանրանկարներում, տապանաքարերի, ճարտարապետական հուշարձանների ու կենցաղային առարկաների վրա պահպանված դարզանախշերում ու պատկերաքանդակներում: Զուռնայի նախատիպեր կարելի է համարել եղջյուրե, մետաղե (պղինձ, բրոնզ, արծաթ) ու փայտե փողերը, որոնք, ինչպես վկայում են նյութական մշակույթի հուշարձաններն ու գրավոր աղբյուրները Հայաստանում տարածված էին մ. թ. ա. առաջին հազարամյակից մինչև ուշ միջնադար¹:

Գեոևս նախնադարից սկսած՝ ոսկրե, մետաղե ու փայտե փողերի տարբեր տեսակները հայտնի էին աշխարհի համարյա բոլոր ժողովուրդներին: Դրանք դարերի ընթացքում բարեփոխվել են, կատարելագործվել ժամանակի պահանջների համաձայն, կամ մոռացվել՝ գառնալով սոսկ թանգարանային նմուշներ, երբեմն-երբեմն կիրառվելով նվագախմբերում՝ ժամանակի ոգին ավելի կենդանի ու պատկերավոր արտահայտելու նպատակով:

Ունենալով պարզ կառուցվածք և սեղմ տեխնիկական հնարավորություններ, այսպիսի փողերը հիմնականում կիրառվել են որպես ազդանշանային նվագարաններ՝ հաղորդակցման նըպատակով, ինչպես նաև զանազան հոգևոր ու աշխարհիկ ծեսերի ու տոնակատարությունների, անասնապահության², որսի, նավագնացության ժամանակ և ուզմի դաշտում: Ըստ այդմ էլ դրանք Հայաստանում անվանվել են նվիրափող, ահազնափող, նավափող, հաղթության փող, հորելյան փող, փող ռազմական, փող որսորդական, բորու (պոռու), սրափող, բորոզա և այլն³ (հարկ է նշել, որ արևմտահայ բարբառներում այսօր էլ զուռնան հաճախ անվանվում է բորու (պոռու), փող, սրափող, բորոզա):

Երաժշտագետ Ա. Քոչարյանը հայկական հնագույն փողի օրինակ է համարում Սևանի շրջանի Զաղալու (այժմ՝ Մովսսար) գյուղի պեղումներից Ե. Հայայանի հայտնաբերած եղջերափողը, որը թվագրվում է մ. թ. ա. առաջին հազարամյակով: Ավելի ուշ, Գեղարդի (13-րդ դ.) և Մշո Առաքելոց (1134 թ.) վանքերի պատկերաքանդակներում, ինչպես նաև միջնադարյան մանրանկարներում, պարզորոշ երևում են եղջյուրե, մետաղե փողերը, շեփոռներն ու զուռնաները՝ իրենց տարատեսակներով: Հնագույն ժամանակներից սկսած մարդը հավատացել է ձայնի մտգական-դերբնական ուժին՝ նրան վերագրելով շարք վանելու ու խափանելու հատկություններ: Այդ նպատակով ծիսական արարողությունների ու պարերի ժամանակ օգտագործվել են ծափերը, սոթերի դոփյունները, աղմկային, հարկանային, փողային ու լարային խմբերի որոշ նվագարաններ ու ձայն արձակող զանազան հարմարանքներ (շխխկաններ, բոժոժներ, թշոցներ, զիլեր, զանգակներ, ծնծղաներ, ճրոռեր, կարկաշաներ և այլն): Դրանց վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր օրինակներ կան գրանցված նաև 19-րդ—20-րդ դդ. ազգագրական նյութերում. ինչպես ծաղկազարդի տոնին օգտագործված ճրոռերն ու կարկաշանները, հոգևոր ծեսերի ժամանակ՝ ծնծղաներն ու թշոցը, ավանդական տարազի թևերին կարվող բոժոժները, դժվար ծննդաբերության ժամանակ՝ հրացանի կրակոցները:


Ձայնի վերագրվող մտգական-դերբնական ուժերն աստիճանաբար փոխանցվել են նաև ձայն արձակող որոշ առարկաների, հատկապես նվագարաններին, և հաճախ սրբացվել են տոնա-ծիսական արարողությունների ժամանակ դրանցից առավել շատ օգտագործվողները: Սրբազան նվագարաններ ունեցել են հին աշխարհի համարյա բոլոր ժողովուրդները, որոնք բազմապիսի ծեսեր ու արարողություններ են կատարել դրանց պատվին, հետաքրքիր առասպելներով ու լեգենդներով մեկնել դրանց ծագումն ու հրաշագործությունները (սխտր, զանգ, ծնծղա, թրմբուկ, սրինգ, փող, քնար, վին և այլն): Կ. Զակար գրում է, որ երբայցիների պատկերացմամբ խառնարայի (արծաթե փող) և շուֆարի (եղջերափող) հրաշագործ հնչյունները կարող էին

¹ Տե՛ս Ա. Կ. Քոչարյան, Երաժշտական գործիքները Հայաստանում, Փողային խումբ, ՊԲՀ, 1963, № 3, էջ 164:

² Ըստ բանասաց Անդրանիկ Զեյթունյանի՝ համընհասարակ հովվական ազդանշանային եղջերափողին անվանում են գողեշա գուռնա:

³ С. С. Лисициан. Старинные пляски и театральные представления армянского народа, т. I., Ереван, 1958, с. 139—157.

վանել խավարը և արթնացնել աստվածներին, ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ հրեական սինագոգում Նոր Տարին, Նորալուսինը և Քավության տոնն ազդարարվում էին այդ նվագարաններով: Վերը հիշատակված Փեղարդի և Մշո Առաջելոց վանքերի քանդակներում պատկերված նվագարանները ևս պատկանում են այս տիպերին: Հին Հայաստանում եղջերափողի տարատեսակներից մեկը կոչվել է հորելյան փող և համարվել սրբազան նվագարան (բստ Անտոյան): jöbel երբայերին նշանակում է խոյ)՝ Պատմիչների վկայությամբ Հայաստանում հորելյան փողերը կիրառվել են զոհաբերությունների ժամանակ և հաճախ կոչվել նաև նվիրափող: Հորելյան փողերը լայն կիրառություն են ունեցել հեթանոսական տոներին, և դրանց ավելի հանդիսավոր տեսք տալու նպատակով՝ տոնին մասնակցել է յոթ քրմից բաղկացած փողհարների խումբը⁵ (հիշատակելի է յոթ մոզական թիվը, որի խորհուրդը տարածվում է նաև նվագարաններին): «Եղջերափողերի հնագույն ձևերը, որոնք մինչև այսօր էլ դեռ ապրում են որոշ ժողովուրդների մոտ, երեսի կողմում ձայնանցքեր չունեն: Այս գործիքների վրա հնարավոր է վերարտադրել երկու կամ երեք ոչ մաքուր կոպիտ ձայն, որոնց բարձրությունը կապված է կատարողի շրթնների զրվածքից և փշելու ուժից: Ավելի ուշ շրջանի կատարելագործված գործիքներն ունեցել են վերադիր մուգըտուկ: Հնչյունային միջոցների հարստացման նպատակով հետագայում գործիքի վրա սկսում են պատրաստել ձայնանցքեր»⁶:



Մեծ զուռնաներ. Արևմտյան Հայաստան, XIX դ.

Նույնպես արդեն նշեցինք, վերահիշյալ փողերի կատարելագործված տեսակներից մեկը զուռնան է, որն իր մի քանի տարբերակներով մինչև օրս կիրառվում է Հայաստանի բոլոր պատմա-ազգագրական շրջաններում: Չուռնան Արևելքում սիրված ու տարածված նվագարաններից է, որի տարբեր տեսակները տարածված են Կովկասում (հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ), ավարցիների՝ զուռնա), Միջին Ասիայում (տաջիկներ, ուզբեկներ՝ սուրնայ), Իրանում (զուռնա), Արարիայում (զեմպր), Քուրդիայում (զուռնա), Չինաստանում (սոնա), Հնդկաստանում (շահ-նայ, նագասվարամ), Մակեդոնիայում (զուռնա), Բիրմայում, Սիամում (շավմ, զուռնա), Արևմուտքում՝ Անգլիայից մինչև Մարոկկո, Արևելքում՝ Չինաստանից մինչև Ժավա, շավմ ցեղի մոտ, ինչպես նաև որպես Արևմուտքի պարկապուղուկների փող (զուռնա, շավմ)⁷:

Չուռնա բառը պարսկական ծագում ունի (sur—երթ, խնդուր, հարսանիք, nau, neu—ֆլեյտա, կոկորդ, շունչ, շնչափող), մեկնաբանվում է նաև որպես հարսանեկան ֆլեյտա, փող, հորոյ՝ Չուռնայի և նրա տարբեր տիպերի կատարելագործումից էլ հետագայում ստեղծվեց ժամանակակից հորոյը: Հայկական զուռնան ունի ուղիղ, աստիճանաբար լայնացող փող (զուռնի փող, զուռնի փեռ, զուռնի գլուխ¹⁰, զուռնի շանաղ¹¹), որի բերանի նեղ մասին հազգվում է երկնեզված փայտյա հարմարանք՝ լեզվակ. լեզու¹², բոզաղ¹³, բերան¹⁴, բեշա¹⁵, բիբիկ (բի-

⁴ К. Заке. Музыкальная культура Палестины, в кн. Музыкальная культура древнего мира, Л., 1937, с. 82—83.
⁵ Հ. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 401:
⁶ Ա. Կ. Քոչարյան, Նշվ. աշխ., էջ 165—166:
 Նույն տեղում:
⁸ Энциклопедический музыкальный словарь. М., 1959, стр. 85, Athony Baines, Woodwind Instruments and their History, London, 1977, p. 228.
⁹ Персидско-русский словарь, М., 1953, с. 296, 575.
¹⁰ С. С. Лисицман, Նշվ. աշխ., շ. 4, Պիկիչյան, Գաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Անիի շրջան, 1983, Շամշադիի շրջ., 1980:
¹¹ ԴԱՆ, Իշկանի շրջ., 1981, Ախալքալաքի շրջ., 1982, Մարտունու շրջ., 1984, Խանլարի շրջ., 1985, Անիի շրջ., 1983:
¹² С. С. Лисицман, Նշվ. աշխ., ԴԱՆ, Երևան, 1981, լեկինական, 1983:
¹³ С. С. Лисицман, Նշվ. աշխ. (Շատուխ), ԴԱՆ, Մարտունու շրջ. (ալաշկերտցիներ), 1984:
¹⁴ ԴԱՆ, Անիի շրջ., 1983:
¹⁵ ԴԱՆ, Շամշադիի շրջ., 1980, Իշկանի շրջ., 1981, Ախալքալաքի շրջ., 1982, Երևան, 1981, լեկինական, 1982:

բիգ)¹⁶, կանորդ¹⁷, վասի¹⁸, իսկ վերջիններս՝ եղեգնե ծայրակալով (պպիշ) մետաղյա (բրոնզ, պղինձ, երբեմն՝ երկաթ), հնում եղեգնե մունդշտուկը (մի¹⁹, ձիրուն²⁰, պիպեշ²¹, պիպիշ²², պի-
բիշ²³, բիպեշ²⁴, պիպիգ²⁵, բիրբը²⁶, վասլա²⁷)։ Եղեգնե պպիշը²⁸ (ծրվվան, ծվան²⁹, ծղան³⁰, շրբ-
բիկ³¹, պուկու³²) պահպանելու նպատակով, նվազելուց հետո նրա վրա փայտե կամ եղեգնե փոք-
րիկ կաղապար են հագցնում (պտկալ, պրդկալ³³, խամուտ³⁴), իսկ նվագելիս, շուրթերը հենելու և
օդն ուղղակիորեն եղեգնե պպիշի մեջ մղելու նպատակով՝ փողի և մունդշտուկի արանքում ոսկրե
(սաղափ), մետաղե (արծաթ, պղինձ), երբեմն նաև պլաստմասսայի բարակ սկավառակ են
տեղադրում (թախալա, թաղալա³⁵, թաղալիս, թաղալը³⁶, թղալախ³⁷)։ Զուռնայի միլերը³⁸ (հա-
ճախ մի քանիսն են լինում, հաստ ու բարակ՝ լայն ու նեղ եղեգնե պպիշներով), սկավառակ-
ներն ու պտկալներն արծաթե շղթայիկով կախվում են փողից։ Զուռնայի փողը սովորաբար
պատրաստվում է ծիրանենու փայտից, թեև Հայաստանի տարբեր շրջաններում օգտագործում
են նաև ընկուզենին (Հայոց ձոր, Զավախք), հոնենին (Շամշաղին, Իջևան, Համշեն), վայրի³⁹
տանձենին (Տավուշ), վայրի խնձորենին, վայրի սալորենին (Համշեն), թթենին (Զավախք, Համ-
շեն), նոճին, սոճին (Փոքր Հայք)։ Անցյալում այն պատրաստել են նաև մետաղից (պղինձ,
արույր), երկարավուն դրձից, իսկ մեր օրերում երբեմն հանդիպում են նաև էրոնիտե զուռ-
նաներ։ Հայաստանում տարածված են մեծ և փոքր զուռնաները, որոնք կառուցվածքով հիմնա-
կանում նույնն են, տարբերվում են միայն չափսերով և դրանից բխող՝ հնչողութայնք ու ձայ-
նածավալով։ Մեծ զուռնաներն աչքի են ընկնում լայն փողով, ունեն լիքը, թավ ձայն և ավելի
բնորոշ են Արևմտյան Հայաստանին (Սասուն, Վան, Մուշ, Շատախ, Ալաշկերտ), թեև կիրառ-
վում են նաև մեր օրերում (հատկապես Արևմտյան Հայաստանից գաղթածների շրջանում)։ Սա
է հավանաբար պատճառը, որ հաճախ, տարբերակելու նպատակով այս տիպը կոչվում է «տաճ-
կական», «սուլեյման» կամ «կախթականի» զուռնա։

Փոքր զուռնան, որ ավելի բնորոշ է Արևելյան Հայաստանին, ունի համեմատաբար նեղ փող,
զիլ և ճշացող ձայն և հյուսիս-արևելյան շրջաններում (Շամշաղին, Իջևան) երբեմն կոչվում է
նաև չուռա (թրք.՝ տեսակ)։

¹⁶ Սարգսյան, Բալու, Գահիրե, 1982, էջ 369 (Այրարատ, Մուշ, Վան, Ալաշկերտ, Շիրակ),
Ռ. Հ. Բաղդամյան, Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960, էջ 117, Ս. Ս. Лисициан,
Նշվ. աշխ.։

¹⁷ ԴԱՆ, Խանյարի շրջ., 1985։

¹⁸ ԴԱՆ, Անիի շրջ., 1988։

¹⁹ Ս. Ս. Лисициан, Նշվ. աշխ., ԴԱՆ, Երևան, 1981, Լենինական, 1982, Անիի շրջ., 1983,
Մարտունու շրջ., 1984, Ախալթալաի շրջ., 1982, Խանյարի շրջ., 1985։

²⁰ ԴԱՆ, Համշեն, 1985։

²¹ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 407։

²² Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, է. 558 (Այրարատ, Մուշ, Վան,
Շիրակ, Ալաշկերտ), Ալ. Մարգարյան, Նշվ. աշխ., էջ 465։

²³ Հ. Մ. Մկրտչյան, Կարևո բարբառը, Երևան, 1952, էջ 174։

²⁴ ԴԱՆ, Ախալթալաի շրջ., 1982,

²⁵ Ռ. Հ. Բաղդամյան, Նշվ. աշխ., էջ 161։

²⁶ Ս. Ս. Лисициан, Նշվ. աշխ., էջ 143 (Շատախ)։

²⁷ ԴԱՆ, Ախալթալաի շրջ., 1982։

²⁸ ԴԱՆ, Երևան, 1981, Լենինական, 1982։

²⁹ Ալ. Մարգարյան, Նշվ. աշխ., էջ 407, Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 558։

³⁰ Ռ. Հ. Բաղդամյան, Շամախի բարբառը, Երևան, 1964, էջ 239։

³¹ Հ. Անադյան, Հայերեն գավառական բառարան, էԱՓ, հ. Թ, ՔիՖլիս, 1913, էջ 8 (Զմշկա-
ծագի բարբառ)։

³² ԴԱՆ, Շամշաղինի շրջ., 1980։

³³ А. К. Кочарян. Современные народные музыкальные инструменты Арменин
(մեքենագիր տեքստը գտնվում է Ե. Զարենցի անվ. գրականութային և արվեստի թանգարանում),
էջ 42, Ալ. Մարգարյան, Նշվ. աշխ., էջ 462, Հ. Մկրտչյան, Նշվ. աշխ., էջ 178։

³⁴ ԴԱՆ, Շամշաղինի շրջ., 1980։

³⁵ А. К. Кочарян, Նշվ. աշխ., ԴԱՆ, Երևան, 1981, Լենինական, 1982։

³⁶ ԴԱՆ, Անիի շրջ., 1983, Խանյարի շրջ., 1985։

³⁷ ԴԱՆ, Շամշաղինի շրջ., 1980։

³⁸ Ինչպես նկատվում է վերը շարադրվածից, տարբեր բարբառներում հաճախ մետաղե
մունդշտուկի և նրա ծայրին տեղադրված եղեգնե զույգ բաբախող լեզվակավոր պպիշի անուն-
ները նույնանում են։

³⁹ Ըստ ժողովրդական վարպետների՝ թիշ շրվելու շնորհիվ վայրի ծառերի փայտն ավելի
ամուր և դժմացկուն է լինում։

Հայկական մեծ և փոքր զուռնաներն⁴⁰ ունեն 7—8 (հազվադեպ նաև 6 կամ 9) ձայնավերարտադրման անցք երեսի կողմում, մեկը՝ հակառակ (բութ մասի համար)։ Զուռնաների հրնչյունաշարը դիտտոնիկ է, ձայնածավալը՝ երկու ութնյակ։ Ի տարբերություն փոքր զուռնաների, մեծերի փողին բացվում են նաև օժանդակ անցքեր՝ օդի հոսանքը կարգավորելու նպատակով։ Որպեսզի սենյակում զուռնայի ձայնն ավելի մեղմ հնչի, փոխում են մուկղաշտուկը կամ փողի ու մուկղաշտուկի արանքում դնում ոստ (ոսկրե բարակ թիթեղ)։ Զուռնայի ձայնային-հնչողական առանձնատեսակություններն ավելի հարմար են բացօթյա հավաքություններին, իսկ ավելի նեղ, մտերմիկ պայմաններում այն չի կարող ըստ ամենաբնի դրսևորվել և օգտագործվել։ Զուռնան անսամբլային նվագարան է, հիմնականում նվագում են զուլզուլ⁴¹ (առաջին և երկրորդ)՝ հարկանային նվագարանների (փոքրը՝ դհուլի, մեծը՝ գոսի, մեծ թմբուկ) ձայնակցությամբ։ Սովորաբար առաջին զուռնան (վարպետը՝ ուստա) կատարում է մայր եղանակը, երկրորդը՝ ծորչի (դամքաշ) նվագակցում է՝ ձգելով լադի հիմնական հնչյունները, իսկ դհուլն ընդգծում է մեղեդու ռիթմիկ պատկերը։ Ռոստովի մարզում բնակվող նորնախիչևանցիներն այսօր էլ օգտագործում են զուռնայի տարատեսակներից մեկը՝ բորոզան, որի փողի երկարությունը 48,5 սմ է, նեղ մասի տրամագիծը 4 սմ, լայն մասինը՝ 6,5 սմ, ունի յոթ հիմնական ձայնանցք՝ երեսի կողմում, մեկը՝ հակառակ և յոթ օժանդակ (երեքը զույգ, մեկը՝ կենտ)։ Հստ պահպանված ծողովրդական ավանդության, թաթարական հրոսակախմբերի դեմ կովիլիս հայերը խրոխտ հնչեցնում էին թմբուկներն ու բորոզաները և խուճապի մատնում թշնամուն։ Հետագայում թաթար խանը հայերին արգելեց բորոզա ու զուռնա նվագել (հմմտ. «Սասունցի Դավիթ» էպոսում մարազորքի «հազար-հազար» փողհարների հետ)։

Համշենահայերի մոտ տարածված է զուռնայի մի այլ տեսակը՝ բորուն⁴², որի փողի երկարությունը 70—80 սմ է, նեղ մասի տրամագիծը 4 սմ, լայն մասինը՝ 12 սմ։ «Կա զուռնի մի տեսակ էլ, որ ավելի մեծ ձայն է հանում և ավելի սիրում են, երան քթորու» են ասում⁴³,— գրում է Հ. Մուրադյանը։ Հավանաբար այս նվագարանն էլ բորոզայի տարատեսակներից է և հիմնականում կիրառվել է ուզմի դաշտում, որսի ժամանակ և հանդիսություններին։

Բացի վերոհիշյալ տիպերից, նորնախիչևանցիների կենցաղում օգտագործվում է նաև էրո-



Փոքր զուռնա, Այրարատ
Մեծ զուռնա, Համշեն



Փոքր զուռնաներ, XIX—XX դդ.

⁴⁰ Մեծը՝ փողի երկարությունը 29—35 սմ, տրամագիծը՝ 0,8—1 սմ նեղ մասում, 7,5—8,5 սմ լայն մասում։ Փոքրը՝ փողի երկարությունը 25—28,5 սմ, տրամագիծը նեղ մասում՝ 1—1,2 սմ, լայն մասում՝ 3,5—4,8 սմ։

⁴¹ Արևմտյան Հայաստանի զուռնաներն օգտագործվում են նաև առանձին՝ մեծ դհուլի հետ։

⁴² ԴԱՆ, Համշեն, 1985 թ., Բառագիրք Հայկազգան լեզուի, հ. Բ, 1769, Վենետիկ, էջ 171. «Զուռնայ՝ փող, շիփոր, տե՛ս՝ Պոռու, Զուռնայ չալող՝ զուռնանի, տե՛ս Պոռուզան»։

⁴³ «Ազգագրական հանդես» (այսուհետև ԱՀ), գիրք Դ, Քիֆլիս, 1898, Հ. Մաւաղյանց, Համշենցի հայեր, էջ 140։

նիտե փոքրիկ զուռնան (փողի երկարությունը՝ 25,5 սմ, նեղ մասի տրամագիծը՝ 3 սմ, լայն մասինը՝ 4,8 սմ), որն օժտված է սուր; ճշացող ձայնով, իսկ համշենահայերի մոտ՝ մեծ զուռնան (երկարությունը՝ 50—55 սմ) և փոքրը՝ ջուլա (երկարությունը՝ 25—30 սմ):

Ըստ 19—20-րդ դդ. գրանցված ազգագրական նյութերի՝ կարելի է ասել, որ ինչպես հնում փողերը, այնպես էլ հետագայում զուռնան լայնորեն կիրառվել է հայոց կենցաղում: Նրա զիւ ձայնը մերթ հրավիրել է հարսանյաց հանդեսի, մերթ՝ ավանդական այս կամ այն տոնին մասնակցելու: Զուռնայի նվագով են ուղեկցվել առաջին ակոսի բացման, զարնանացանի, բերքահավաքի, նախրաթողի, ջրաղացքարի, տան հիմնաքարի տեղադրման արարողությունները, կենդանիների կովախաղերը (աբուրակոխի, խոյակոխի), լարախաղացների ներկայացումներն ու թատերականացված արարողությունները:

Ինչպես նշեցինք, զուռնայի կառուցվածքին ու հնչողությանը հաճախ վերագրել են զանազան մոգական-գերբնական հատկություններ, ըստ որոնց այն կարող է ապահովել պտղաբերությունն ու սերնդաճը, խափանել շարը և բժշկել հիվանդներին: Հատկապես այս առումով այն հանդես է դադիս հայոց ավանդական տոների ու ծեսերի ժամանակ: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Ինչպես հայտնի է, հարսանեկան ծեսն ուղեկցվել է մի շարք մոգական-հմայական գործողություններով, որոնք ուղղված էին երիտասարդ զուլգի պտղաբերության ապահովման արեւատությանը: Հարսանիքի մասցուի՝ եզմորթների արարողությունն սկսվում է զուռնայի նվագով, որի ժամանակ փեսացուի մայրը բանալին թաթախում է զոհի արյան մեջ և փակում կողպեքը, որ փեսացուն առնականությունից չզրկվի⁴⁴:

Հարսանիքի կարևոր փուլերից են հարսին տնից հանելն ու փեսայի շեմքից ներս մտնելը, որոնց ընթացքում պտղաբերությունն ու առատությունն ակնկալող բոլոր ծեսերն ու արարողություններն ուղեկցվում են զուռնայի նվագով (հարս ու փեսայի գլխին աղանձ, ընկույզ, կաղին, շամիչ, մանր դրամ շաղ տալը, նրանց դիմաց զաթաներով պարելը, ուսերին լավաջ գցելը, փեսի ծառերով պարելը, ափսե կոտրելը և այլն): Հարսի տնից մինչև եկեղեցի ու ապա փեսայի տուն, ամբողջ ճանապարհին հնչող զուռնայի անընդմեջ նվագն ու պարերը թագավորին ու թագուհուն պահպանում էին ճանապարհին դարանած շարքերից (նվագը դադարում էր միայն եկեղեցում կատարվող պսակի ժամանակ, որի ավարտից հետո կրկին շարունակվում էր):

Հետաքրքիր է, որ նորահարսին տնից հանելու մեղեդին կոչվում է «Քոչի» և ըստ Ս. Լիսիցյանի կապվում է նախնիների ու տոտեմների՝ այծի ու խոյի պաշտամունքի ու պտղաբերության հետ (այն համահայկական բնույթ ունի՝ կատարման որոշ տարբերակներով): Թեև հարսանիքի ընթացքում, հատկապես տանը՝ ինչույցի ժամանակ, հաճախ հնչում են նաև դուդուկն ու սրինգը, ինչպես նաև սազանդարների անսամբլը (թառ, քամանչա, քանոն, սանթուր, քեմանի, դափ և այլն), սակայն հարսի ու փեսայի պարն անպայման ուղեկցվում է զուռնայի նվագով:

Հյուսիս-արևելյան Հայաստանում, Զավախքում ու Քիֆլիսում ընդունված է եղել մահացած ծնողների ու նախնիների գերեզմանին զուռնայի նվագով կատարվող փեսայի պարը⁴⁵, որից հետո միայն նա իրավունք ուներ ամուսնական առաջատու մտնել: Գանձակում տարածված սովորության համաձայն «...թագավորը խաչեղբոր ու մակարների հետ դավուլ-զուռնայով օրհնում էր հարազատների գերեզմանները, որից հետո վերադառնում է հարսանքատունը»⁴⁶:

Ինչպես վկայում են ազգագրական նյութերը⁴⁷, հարսանիքի սկիզբն ավտոող լուրը գլուղում արշալույսին տարածվում էր զուռնայի «Կանչ» կոչվող մեղեդիով, որն արեին ձուլված յուրօրինակ հիմն էր:

Հարսանիքի ավարտը ևս լուսաբացին ազդարարվում էր «Սահարի» կոչվող մեղեդիով, որը նվագելիս զուռնային դեմքով դառնում էր դեպի արևը: Այս ծիսական մեղեդու մեջ պահպանված արխայիկ տարրերն ու կատարման եղանակը վկայում են արևագալի պաշտամունքի հետ ունեցած նրա աղերսների մասին:

Զուռնայի նվագացանկում կարելի է նկատել մեծ և փոքր կտավի ստեղծագործություններ, որոնցից առաջինի հետ մեծ մասամբ կապվում են ծիսական մեղեդիները, իսկ երկրորդին՝ ժողովրդական պարերն ու խաղիկները: Բերված օրինակներից երևում է, որ զուռնան, ինչպես և հնագույն փողերը, պատկանում է հայոց սրբազան նվագարանների թվին, որին վերագրվում է շարխափան նշանակություն, պտղաբերություն և սերնդաճ ապահովելու հատկություններ: Ակ-

⁴⁴ ԱՀ, գիրք 16, Ե. Լալայան, Նոր Բայազետի գավառ, Քիֆլիս, 1907, էջ 18:

⁴⁵ Ժ. Կ. Խաչատրյան, Զավախքի հայ ժողովրդական պարերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 7, Երևան, 1975, էջ 57:

⁴⁶ ԱՀ, գիրք 2, Ե. Լալայան, Գանձակի գավառ, Քիֆլիս, 1900, էջ 268:

⁴⁷ С. С. Лисициан, Նշվ, աշխ., էջ 404:

նառու է նաև նրա կապն արևի պաշտամունքի հետ, որն արդեն ժամանակի ընթացքում կորցրել է իր նախնական նշանակությունը և մոռացության մատնվել: Ասվածը հաստատելու նպատակով դիտարկենք զուտնան նաև հայկական ավանդական տոներին և ծեսերի ժամանակ: Ծ. Հայաստանը⁴⁸ գրում է «Մեծ Պասի երեկոյան մի էջ էին թամթում, վրան նստեցնում մի կին, երեսին մուր քսում և դավուլ-զուռնայի առաջնորդությամբ շրջեցնում տնե-տուն, դրամ հավաքում, որը նախատեսվում էր գատիկ մատաղացուի համար: Սևերես կինը մեծ պասն էր, որին շուքով շրջեցնում էին, որ մեծ պասն առանց փորձանքի անցնի»: Տեառնընդառաջի ժամանակ, վկայում է Ա. Մխիթարյանցը, «Միևնույն տարվա նորասպակ զուգերը, խաշերոր հետ միասին, վառած մոմերով, դուվալ-զուռնան ածելով, մի կին էլ ափսեով խեծաղը, ոսպը կամ բոված սիսեռը, շամշարաբը ձեռին, առաչներն ընկած, կրակի շուրջը երեք անգամ պտտում են և մտնում տուն»⁴⁹: «Վարդավառին Ազուլիսում, մինչև 19-րդ դ. կեսերը, մանր վարունգներով, վարդերով, խնձորով զարդարված խաչն ամրացնում էին նշանված աղջիկների ձեռքով ծեցրած ցորենի կամ գարու մեջ և մի պառավ կին այն զուռնա-նաղարայի նվագի տակ պարեցնում էր գլուղի հրապարակում»⁵⁰: Բալուում, Համբարձման տոներն, «Երիտասարդ տղաներն ու աղջիկները շուրջպար էին բռնում դավուլ-զուռնայի նվագի տակ»⁵¹: «Թաբեկենդին և հարսանիքին, մեծ պասի 1-ին օրը կատարվող այժի ծխական պարն ուղեկցվում էր զուռնայի նվագով»⁵²: Մուսա լեռում «Վարդանանց Հինգաբաթին ուղեկցվում էր զուռնա-թմբուկի անվերջ հնչյուններով, առատ կերուխումով ու զոհաբերություններով»⁵³: «Ախալքալաքի Վայյան գյուղում զարեանացանն սկսելուց առաջ կատարվող խամե հանելու արարողության ժամանակ հինալով և գլուղի կողմած ներկով նախազարդված լծկանների առաջին անգամ գոմից հանում էին զուռնա-դճուղի հնչյունների տակ»⁵⁴:

Գրանցված ազգագրական նյութերի վկայությամբ, զարեանացանի նախորդ գիշերը տղամարդիկ գնում էին դաշտ և սերմնաթափության ծես կատարում՝ դաշտերի պտղաբերությունն ապահովելու ակնկալությամբ: Այս գիշերային ծեսը նախորդում էր առաջին ակոսի բացման և առաջին սերմը հողին հանձնելու արարողությանը, որը կատարվում էր մեծ հանդիսությամբ՝ զուռնա-դճուղի նվագով (Շամշարյանի, Ապարանի, Սալակայի շրջաններ):

Երբևեկում տարածված «ղըղաք» կոչվող արարողության ժամանակ «...աշնանը առաջին անգամ խոյերը մաքիներին խառնելիս, խոյերի եղջյուրները կարմիր ներկում էին, զուռնազուռն բրդե թելերից փնջեր պատրաստում, կախում եղջյուրներից, կանաչներից ու կողերից, ամբողջ մարմինը աշնանային ծաղիկներով զարդարում, ապա խորոված գառ, փլավ, ձվածեղ վերցնելով «դավուլ-զուռնայով» քեֆ, ուրախությունով, խմբովին խոյերը տանում էին խառնում ոչխարի հոտին»⁵⁵:

Հայաստանի շատ շրջաններում հաճախ բերվանավաճի ևս ընթանում էր մեծ հանդիսությամբ, զուռնա-դճուղի նվագով. «Լուսարացին, եկեղեցուն մոտիկ սնախրակյենն» էին հավաքում հարյուրից հարյուր քսան տղամարդ ու նաղարա-զուռնայի նվագակցությամբ գնում ուսի ախարաբը, որը ուսի պատվերով պետք է առաջինը հնձվեր»⁵⁶:

Հայաստանում դիվանագրությունը՝ «խաղացավ» կոչվող հիվանդությունը, ևս բուժում էին երաժշտությամբ ու պարով, հաճախ՝ զուռնայի նվագով: Այս մասին արժեքավոր տեղեկություններ կան միջնադարյան ձեռագրերում, ազգագրական նյութերում, բժշկագիտական և գեղարվեստական երկերում⁵⁷:

Տավուշում մեր զրանցած նյութերը վկայում են, որ ծանր ծննդաբերության ժամանակ հաճախ տան դռան առջև նվագելու են հրավիրել զուռնաշուն՝ շար ոգիներին հեռացնելու և բարե-

⁴⁸ ԱՀ, գիրք 8, Ծ. Հայաստան, Վարանդա, Թիֆլիս, 1898, էջ 343:

⁴⁹ Էմինյան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ էԱԺ), հ. Ա, Փրշանք Երբևեկի ամբարներից, հավաքեց Աղ. Մխիթարեանց, Մոսկուա—Ալեքսանդրապոլ, 1901, էջ 265:

⁵⁰ Վ. Բոլյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 497:

⁵¹ Հ. Սարգսյան, Բալու, Կահիրե, 1982, էջ 39:

⁵² Յ. X. Петросян. Образы животных в армянском народном театре.—Советская этнография, 1974, № 5, стр. 131.

⁵³ Յուշամատեան Մուսա լեռան, Պեյրութ, 1970, էջ 160:

⁵⁴ Վ. Բոլյան, Նշվ. աշխ., էջ 465:

⁵⁵ էԱԺ, հ. Ա, էջ 265:

⁵⁶ Ս. Հակոբյան, Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Եր., 1978, էջ 29:

⁵⁷ Л. А. Оганесян. История медицины в Армении, т. I, Ереван, 1946, с. 40. Ժ. Կ. Խաչատրյան, «Խաղացավի» դիվանագրության բուժումը պարով, Լրաբեր հաս. գիտ., Եր., 1980, № 10, էջ 89:

հաջող ծնունդ պահանջվելու ակնկալությամբ (հմտ. նույն նպատակով արվող հրացանի կրակոցների հետ): Այստեղ երբեմն դուռնաշուն հրավիրել են նաև նվագելու մահացողի (միայն տարեց) գռան առջև, որպեսզի հոգին հանգիստ դուրս գա և խաղաղությամբ բարձրանա երկին: Վայոց ձորում⁵⁸ «Ուշագնաց եղած միջոցին» կարծում են թե ալքերը մտել են փորը և կամենում են նրա շիջարը հանել, որպեսզի սրանց ուշքը գրավեն, և հանկարծակի դուրս հանեն այնտեղից, սկսում են դափ ու գուռնա ածել օննդկանի մոտ:

Ինչպես արդեն վկայում են բերված օրինակները, գուռնան, որպես հնագույն սրբազան փողերի հետնորդ, լայնորեն կիրառվել է հայոց ծիսատեսական համակարգում և կենցաղում, որոշակի նախապատվություն ստանալով մյուս նվագարանների համեմատությամբ: Հատկապես ակնառու է նրա կապը պտղբերությունն պահանջող ու հովանավորող, շարք վանող ու խափանող ծեսերի ու սովորությունների հետ: Թերևս սրանով կարելի է քացատրել նվագարանի պատրաստման, կիրառման, խնամքի ու կատարողական արվեստի հետ կապված ժողովրդական տարրեր ձեռքի ու սովորությունների անկախությունը: Օրինակ, Հայաստանի բոլոր շրջաններում կանանց խոտիվ արգելվում էր գուռնա նվագել, իսկ երիտասարդ աղջիկներին ու հարսներին՝ նույնիսկ նվագարանին ձեռք տալ: Ըստ ժողովրդական պատկերացումների, գուռնան միայն տղամարդու նվագարան է, որի կառուցվածքը հաճախ նմանեցվում է ֆայլուններին⁵⁹: Կանանց նկատմամբ կիրառվող արգելքը բանասացները կապում են նվագարանի կատարման դժվարությունների, հրգոր, զի՛ կնոջը ոչ սազական ձայնի, մեր կարծիքով նաև՝ տղամարդկանց միտքյուններին պատկանող սրբազան առարկաների շարքում դասվելու հետ: Զուռնան խնամքով պահվում էր տանը՝ հաճախ որևէ Թաթարացում կամ շերեւացող տեղում և պահպանվում օտար ալքից: Առանձին խնամքով և պատվախնդրությամբ գուռնաչու կինը կամ թույլը կարում ու ասեղնագործում էին նվագարանի մետաքսյա (թավշյա, Լրբեմն՝ կարպետագործ) պատյան տուպրակը, որը պատվում էր կենաց ծառերի ու վարդյակների, հաճախ՝ նոսն ու նշերի, եռանկյունիների և այլ հմայական զարդանախշերով, որոնք արվում էին հատկապես կարմիր ու կանաչ թելերով: Զուռնայի համար պատրաստվում էին նաև փայտյա պատյաններ՝ գոտուց կախելու նպատակով, որոնք ևս պատվում էին փորագիր հմայական նախշերով: Հաճախ գուռնան էլ էր զարդարվում փորագրություններով, բնական Թանկարծեք ու կիսաթանկարծեք քարերով, սաղափով ու ոսկորով, ոսկյա, արծաթյա կամ արույրե (ղրվագանախշ, սևադապատ, գուգաթել ու հատիկավորման եղանակով պատրաստված) նրբահյուս թիթեղիկներով, կախիկներով ու շղթաներով, որոնք նրան յուրօրինակ հանդիսավոր տեսք են տվել: Զուռնայի զարդանախշերը ևս հիմնականում բուսական են, երբեմն՝ երկրաչափական, որոնք սկզբնական շրջանում հմայիլի, պահպանակի նշանակություն են ունեցել, սակայն աստիճանաբար մթագնելով, մեր օրերում սոսկ գեղազարդան նշանակություն են ստացել: Զուռնան դասվել է ընտանեկան մասունքների շարքում և փոխանցվել ժառանգաբար: Այն տանից հանելը կամ ուրիշին տալը հաջողության կորուստ է նշանակել: Նվագարանի նկատմամբ եղած ժողովրդական վերաբերմունքը փոխանցվել է նաև կատարվող վարպետին՝ գուռնաչուն, որը որոշակի արտոնություններ է ստացել համազուլուցիների շրջանում: Զուռնա պատրաստող և նվագող վարպետները մեծ համարում և հարգանք են վայելել ժողովրդի մեջ, հաճախ ազատելի հարկադիր աշխատանքից, լուծել զանազան հասարակական և ներքնտանեկան հարցեր, մասնակցել գյուղի ղեկավարման հետ կապված որոշ գործերի: Իրտելի է, որ հարսանեկան ծեսի ժամանակ փեսայի, քավորի, խաչեղբոր հետ միասին գուռնաչին ևս արժանանում է հարսի մոր նվիրած կոսպանդին և նախշուն գուլպային, իսկ «հավթուռուկ» կոչվող ծեսի ժամանակ՝ նաև փեսայի գլխատած հավին, որը նրա նկատմամբ ցուցաբերած յուրահատուկ վերաբերմունքի նշան է (հմտ. զոհաբերության ծեսի ժամանակ հոգևորականին տրվող զոհի գլխի հետ): Զուռնա պատրաստել ու նվագել են հիմնականում ժողովրդա-պրոֆեսիոնալ վարպետները, որոնք ունեցել են նաև առանձին կազմակերպություն՝ համաբարություն, գուռնաչիների միություն՝ իր ղեկավարով (ուստաբաշի), ներքին օրենքներով, կանոնադրությամբ և դրամարկզով: Ժամանակի մասնույում պահպանվել են որոշ հետաքրքիր փաստեր՝ գուռնաչիների միության ու ելիստությունների միջև եղած տարածայնությունների և իշխանություններից նրանց հալածանքի ենթարկվելու մասին. «Թիֆլիսի քաղաքային դումայի 1880 թ. մարտի 8-ի նիստում իրավասուներին մի քանիսը հետևյալ հաղորդումը արեցին. հունվարի 6-ի Մկրտչության տոնին Թիֆլիսի արհեստավորներին ըստ սովորության հավաքեցին վանքի տաճարի բակում և այնտեղից գրոշակ-

⁵⁸ ԱՀ, գիրք 14, Ծ. [այլայն, Վայոց ձոր, Թիֆլիս, 1906, էջ 137:

⁵⁹ Հայաստանում, ըստ 19—20-րդ դդ. ազգագրական նյութերի, կանանց համար անպարկեշտություն էր համարվում ուղիղ դիրքով բռնած փողային նվագարան նվագելն ընդհանրապես: Բացառություն էին միայն շվիթները՝ այն էլ ղեռնա արբունքի շհասած աղջիկների համար:

⁶⁰ Զուռնա բառն այսօր էլ ժողովրդախոսակցական լեզվում փոխաբերական իմաստով անպարկեշտ խոսք է համարվում: Պատահական չէ նաև, որ գուռնան հաճախ համեմատվում է թթի հետ կամ փոխաբերական իմաստով նշանակում թիթ:

ներով ու զուռնայով ուղևորվեցին շրորհներին: Բակից դուրս գալու պահին ոստիկանությունը կանգնեցրեց թափորը և ձերբակալեց զուռնաչիներին: Թիֆլիսում ոստիկանությունն արգելել էր նաև զուռնա նվագել Բարեկենդանի տոներին և Սալուլակի թաղամասում տեղացիների մի հարսանիքից դուրս էր վճռել զուռնաչիներին: Փաղաքային դուման որոշում է միջնորդություն ներկայացնել զուռնայի արգելման մասին Թիֆլիսի ոստիկանապետի կարգադրության վերացման համար: ...Այդ մասին է վկայում Թիֆլիսի քաղաքապետին ուղղված «Թիֆլիսի ասիական երաժիշտների, այսպես կոչված «զուռնաչիների միության խնդրագիրը»: Ութսուն ստորագրություն կրող այդ խնդրագրում ասված է. «Զուռնան Վրաստանի անցյալ կյանքի պահպանված հուշարձաններից մեկը լինելով, տեղացիների⁶¹ համար արժանահիշատակ և շափազանց ցանկալի է, որ կարծես օրենքի կողմից էլ չի ժխտվում: ...Մինչդեռ այժմ ոստիկանությունը նորից արգելում է այդ երաժշտությունը և մեր 80 ընտանիքներին, որոնք իրենց օրվա պարենը հայթայթում են միայն շնորհիվ այդ երաժշտության, որը դարձել է մեր գոյության միակ միջոցը, դնում է ծայրահեղ հուսահատության մեջ»⁶²:

Ժամանակակից կենցաղում, բազմաթիվ դասական ու եվրոպական նվագարանների կողքին, զուռնան չի կորցրել իր հմայքը և հաճախ օգտագործվում է կ' առօրյայում, կ' ժողովրդական տոների ու ծեսերի ժամանակ (առաջին ակոս, բերքահավաք, շաքաթօրյակներ, ընտրություններ, հարսանիք, բանակ ճանապարհելի, զանազան խնջույքներ, հանդիսություններ, ֆուտբոլի խաղեր): 1950-ական թվականներին Վ. Բունին, վերափոխելով ժողովրդական զուռնան, ստեղծեց պրիմա և այլ զուռնաներ և նույն ընտանիքի մի նոր նվագարան, որն անվանվեց բունիֆոն, սակայն նորաստեղծ նվագարանները մասսայականություն չստացան:

20-րդ դարի երկրորդ կեսին, հատկապես Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ ամբողջովեցին կապերը եվրոպական երկրների հետ, Հայաստանում սկզբում կղզյակային ձևով (ք. Լենինական, Երևան), հետո նաև ամբողջությամբ տարածվեց փայտե-փողային խմբի կլարնետ նվագարանը, որն իր տեխնիկական լայն հնարավորությունների և ձախային առանձնահատկությունների հոգեհարազատության շնորհիվ տարածվեց հայոց կենցաղում: 1950—70-ական թվականներին կլարնետն այնքան էր տարածվել, որ սկսել էր կասեցնել զուռնային: Այս երևույթը կապվում էր նաև նորույթի ու նորաձևության, որոշ առումով էլ՝ ժամանակին ընդունված «պրեստիժայնություն» պատկերացումների, գեղջկականից հրաժարվելու և եվրոպականին ձգտելու հակումների հետ: Սակայն, արդեն 1975—80-ական թվականներին այս հարցը բնականորեն կարգավորվեց, և սկսեց վերադարձը դեպի ավանդական զուռնան, թեև կլարնետը շարունակում է հավասարապես լայն ժողովրդականություն վայելել Հայաստանի համարյա բոլոր շրջաններում: Հարկ է սակայն նշել, որ կ' իր երգացանկով, կ' յուրովի կատարողականությամբ այն Հայաստանում հնչում է որպես զուռնա և կարծես հեռացել է բուն դասական կլարնետից:

Р. В. ПИКИЧЯН—Зурна в быту армян.—В системе традиционных армянских музыкальных инструментов по своему функциональному значению и звукоряду, звуковому своеобразию особое место занимает зурна, относящаяся к группе духовых-язычковых инструментов. О ее конструкции, выразительных средствах исполнения и использовании можно почерпнуть много интересных сведений в народном фольклоре, в произведениях историографов и летописцев, на средневековых миниатюрах, надгробных памятниках, скульптурных изображениях и бытовых предметах. Прототипом зурны можно считать роговую, металлическую, деревянную трубу, которая, как свидетельствуют памятники материальной культуры и письменные источники, была распространена в Армении с первого тысячелетия до н. э. до позднего средневековья. Зурна сопровождает празднично—обрядовые действия при прокладке первой борозды, при весеннем севе, сборе урожая, при закладке мельничного жернова, первого камня в основании дома, сопровождает свадебные, календарные и скотоводческие обряды. Строению и звучанию зурны часто приписывали различные магические, сверхъестественные свойства, которые могли содействовать, благоприятствовать плодородию, потомству, предотвращать зло, излечивать болезни. Именно в этом качестве она выступает на традиционных праздниках, участвует в обрядах, как один из священных инструментов.

⁶¹ 1803 թ. Թիֆլիսում հաշվվում էր 2700 տուն, որից միայն 18-ն էր վրացական, իսկ մնացածը հայկական էր. տե՛ս Путеводитель по Кавказу М. Владыкина, էջ 330: Իսկ 1821 թ. հոգևարականության կատարած մարդահամարի տվյալներով Թիֆլիսում ապրում էր 2951 հայկական ծովի, 417՝ վրացական ու սուսական. տե՛ս Братская помощь пострадавшим в Турции Армянам, М., 1898, էջ 553:

⁶² Ալ. Շեմվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Եր., 1959, էջ 142: